«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2021

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Ես-ի և Նա-ի կերպարների հոգեբանական վերլուծությունը Նար-Դոսի ստեղծագործության մեջ

ԱՌԱՐԿԱ՝ Գրականություն VIII Դ

ՀԵՂԻՆԱԿ՝ Հայարփի Բունիաթյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Արմավիր, Զրարբիի միջնակարգ դպրոց

Բովանդակություն

Ներածություն ……..……..3

<<Ես և Նա>>-ի կերպարների վերլուծությունը Նար-Դոսի ստեղծագործության մեջ ……..5

Եզրակացություն …….10

Օգտագործված գրականության ցանկ ……12

Ներածություն

Պատմվածքն ունի երկու հերոս ես-ը և նա-ն, որոնց շուրջ ծավալվում են իրադարձությունները: Նրանք երկուսն էլ հայտնվում են նույն իրավիճակում՝ սիրահարվում են անպատասխան սիրով և մերժվում են իրենց սիրած էակների կողմից, ու հեղինակը ներկայացնում է երկու տարբեր ճակատագրեր:

Ես-ը իր ողջ կյանքը ապրել էր անհոգ, առանց վայրիվերումների, չէր տեսել զրկանքներ, երբեք ինքնուրույն դեմ հանդիման չէր կանգնել ճակատագրի դաժան մարտահրավերների առաջ և ահա մի չարաբաստիկ օր նա հայտնվեց տհաճ իրավիճակում, առաջին անգամ մերժում ստացավ, առաջին անգամ իրադարձությունները զարգացան ոչ իր ծրագրով, ու վրա հասավ հուսահատությունը:

Մի մարդ, ով երբեք չի ճաշակել դժվարություններ, ում ամեն ինչ մատուցվել է ոսկեզօծ սկուտեղով, չի հասկանում թե ինչ է կատարվում շրջապատում, թվում է թե աշխարհը շուռ է եկել, թվում է թե ամեն ինչ վերջացել է, քանի որ նա երբեք խնդիրների առաջ կանգնած չէր եղել, երբեք խոչընդոտներ չէր հաղթահարել, ուստի չգիտեր ինչպես են գործում նման պայմաններում և տեղի ունեցավ առավել սարսափելին, նա գահավիժեց կյանքի անդունդը, չունենալով ուժեղ կամային հատկություններ, նա տրվեց կյանքի հորձանուտին, իսկ կյանքը անողոք է թույլերի նկատմամբ:

Իսկ Նա-ն՝ Անտոնիոն, Ես-ի ամբողջովին հակադիր կերպարն է:
Նա իր կյանքում շատ էր զրկանքներ տեսել, այդ իսկ պատճառով կարողացավ աննկուն մնալ ոչ թե կոտրվել, հանձնվել այլ ուժ առնել, դիմագրավել ճակատագրի հարվածին ու շարունակել ապրել՝ ապացուցելու համար իր ճշմարտացիությունը:

Անհավանական կարելի համարել, որ մի կարճ երկտողը կարող է շրջադարձային լինել ու մի ամբողջ կյանք փոխել, ուժ տալ բարձունքներ նվաճելու համար, թռիչքի թևեր պարգևել ու երազանքների իրականացման ճանապարհ հարթել: Չենք կարող ասել, թե ինչ կլիներ եթե Ջուլիետան այդ երկտողը չգրեր:

Ես-ի և Նա-ի տարբերությունը կայանում է նրանում, որ Ես-ը շտապեց, առանց ծանր ու թեթև անելու որոշեց որ հանձնվում է իր մեջ ուժ չգտավ դիմակայելու, իսկ Անտոնիոն որոշում կայացրեց բարոյապես վրեժ լուծել: Երկտողն իր մոտ պահելով, նա վճռեց բարձրանալ, անդադար

բարձրանալ, մինչև որ ձեռակերտ ապարանքի բարձունքից իր վրա նայող քմահաճույքն ինքը ծնկի գար: Միանգամայն ճիշտ որոշում ինչն էլ պսակվեց հաջողությամբ:

Այստեղից հետևություն.

Կյաքը հեքիաթ չէ, ամեն ինչ չի մատուցվում սկուտեղի վրա, ճակատագիրը կարող է ամենաանսպասելի պարագաներում մեզ տհաճ անակնկալներ մատուցել, ու այդ պահին կարող է թվալ թե աշխարհը մեզնից երես է թեքել, մենք կարող ենք մեզ դժբախտ զգալ, ապագան կթվա մշուշոտ և անհրապույր, և միայն կամային բարձր հատկություններ, հոգու տոկունություն, նպատակասլացություն ունենալու դեպքում մենք անկասկած կհաղթահարենք այդ դժվարությունը, ու մենք կհաղթենք, իսկ կյանքը սիրում է հաղթողներին:

<<Ես և Նա>>-ի կերպարների վերլուծությունը Նար-Դոսի ստեղծագործության մեջ

Ուժեղ և թույլ կամքի մասին պատմող գեղեցիկ մի պատմվածք է Նար-Դոսի «Ես և Նա»-ն: Ես-ը, ով չդիմանալով կյանքի փորձություններին, ով սիրո տված առաջին իսկ ապտակից գլորվեց դեպի կյանքի հատակը, կարդալով Նա-ի մասին, հասկանում է արդեն անուղղելի իր թուլությունը:

Ես-ը իրավաբանական փայլուն կրթություն էր ստանում, ամբողջ սրտով սիրահարված և նվիրված էր իր սիրած աղջկան, և համոզված էր, որ այդ զգացմունքները փոխադարձ էին: «Բայց… Օ՜հ այդ բայցը…» Աղջկա մի երկտողը փոխում է երիտասարդի ամբողջ ապագան, քարշ տալիս դեպի հարբեցողության թմրեցնող և «հաճելի» աշխարհ, որտեղ առանձնակի ճնշում են Ես-ին վատ շրջապատն, ու ի վերջո հասցնում կործանման:

Իսկ Նա-ն լինելով թափառաշրջիկ ջութակահար, գեղեցկուհի Ջուլիետայի հայտնի երկտողից հետո («Հայրս ասաց, որ իմ և քո միջև անանց անդունդ կա: Մենք վերևն ենք, դու՝ ներքևը, էլ մի՛ գա: Մոռացի՛ր ինձ): Բարձրանում է կյանքի գեղեցիկ աստիճաններով, դառնում հայտնի ջութակահար Անտոնիո Բոնվինին: Եվ իր գեղեցիկ համերգներից մեկի ժամանակ տեսնելով գեղեցկուհի Ջուլիետային, ցույց է տալիս խնամքով ծալված, պահած և փայփայած երկտողը, որը մեկին կարող էր գցել կյանքի ճահիճների մեջ, իսկ մյուսին բարձրացնել:

Այս երկու տարբեր հոգու տեր մարդկանց համադրությունը փորձում է ընթերցողին ցույց տալ թույլ կամքի ուժի կործանարար հատկությունը:

Պատմվածքում փորձել գտնելը ճիշտը կամ սխալը ճիշտ չէ, քանզի այստեղ խոսվում է մարդու կամքի մասին: Ամեն մարդ ունի իր կամքն ու տեսակետները, իր ուժը՝ պայքարելու կյանքի դժվարությունների դեմ: Մարդ արարածը տարբերվում է մյուսներից իրեն ներաշխարհով, որը մարդուն դարձնում է ունիվերսալ, իսկ ասելը, որ նա սխալ արեց, կամ ճիշտ արեց՝ սխալ է:

Պատմվածքում, ոչ թե պետք է գտնել հերոսների արարքների ճիշտը կամ սխալը, այլ պետք է դասեր քաղել, խորհել, թե դուք ինչ կանեիք այդպիսի դեպքերում, փորձեք հասկանալ և դասեր քաղել հերոսների անձնական փորձից, և ինչու՞ ոչ, համալրել նաև ձեր հոգեկանը ևս մեկ առավելությամբ:

Հակադրության միջոցով հեղինակը կապում է իրար մարդկանց պատմություններ, որոնք չէին կարող առնչություն ունենալ միմյանց հետ առաջին հայացքից: Բայց Նար-Դոսը ցույց է տալիս, որ

մարդկային զգացումները նման են աշխարհի տարբեր անկյուններում ու տարբեր ժամանակներում:

Մենք կարծես կարդում ենք նույն պատմությունը՝ երկու տարբեր վերաջաբաններով: Անձնական, սիրային պատմությունների՝ միմյանց կողք դրվելու, համեմատության ու հակադրության միջոցով հեղինակը խոսում է դասակարգային ու սոցիալական անհավասարության մասին:

Ըստ հեղինակային ես-ի մեկնաբանության՝ այդ երկու սիրավեպերի հիմնական տարբերությունն այն է, որ իտալացի կերպարը՝ «նա»-ն, չընկճվեց դժբախտ սիրուց, ընդհակառակը՝ որպես մարտահրավեր ընդունեց դա, որովհետև իր միջավայրն էր իրեն այդպես դաստիարակել: Նա, լինելով աշխատավոր դասակարգից, սովոր էր կյանքում հանդիպելու ու հաղթահարելու բազմապիսի խոչընդոտներ: Իսկ «ես»-ը, ի տարբերություն «նա»-ի, լինելով բուրժուական միջավայրի ծնունդ, սովոր էր հեշտ ու առանց դժվարությունների կյանքին, ինչի պատճառով էլ շատ արագ ընկճվեց առաջին իսկ դժվարությունից ու չկարողացավ պայքարել[1]:

Այս թեման դպրոցում կարելի է իրագործել հետևյալ դասի պլանի ձևաչափով, որպեսզի աշակերտները ավելի հստակ հասկանան պատմվածքի իմաստը, ինչպես նաև կերպարներին կարողանան ճիշտ ընկալել:

Նշված օրինակով մենք ցույց կտանք միայն «Ես» հատվածը, սակայն կարելի է նույն ձևով նաև կիրառել «Նա» հատվածը:

Օրվա դասի պլան

Դասարանը՝ 8-րդ

Դասի թեման՝ Նար-Դոս «Ես և նա» պատմվածքը («Ես» հատվածը)

Դասի տիպը՝ Նոր նյութի հաղորդման դաս

Դասի տևողությունը՝ 45 րոպե

Դասի նպատակները

Ա/ Ակադեմիական՝

- Իմանալ հատվածի բովանդակությունը,
- Ներկայացնել կերպարները, վերլուծել:

Բ/ Սոցիալական՝

- Պատկերավոր մտածողության,
- Լսելու,

[1] Ես և նա (պատմվածքներ), Երևան 1973, էջ 62-68:

- Տրամաբանելու,
- Համագործակցելու,
- Ընկալածը վերարտադրելու,
- Աշխարհայացք ձևավորելու[2]:

Անհրաժեշտ պարագաներ՝ դասագիրք, գրատախտակ, A4 չափի թղթեր՝ քառաբաժանի հարցերով:

Ցուցադրական նյութեր՝ հեղինակի նկարը, պաստառներ:

Մեթոդներ, Աշխատանքի ձևեր և եղանակներ՝ ԽԻԿ համակարգ, մտագրոհ, պրիզմա, քառաբաժան, անհատական աշխատանք:

Հիմնական հասկացություններ՝ հիասթափություն, կամքի ուժ, զգացմունք, իրավաբանություն:

Կազմակերպչական մաս

Դասի ընթացքը

Խթանման փուլի նկարագրությունը

Ուսուցիչը գրատախտակին գրում է «Կորուստ» բառը: Մտագրոհի միջոցով հարցեր է ուղղում դասարանին՝ խոսելով մարդկային զգացմունքների՝ սիրո, հիասթափության, կորստի և դրանց հետևանքների մասին: Կազմում են պրիզմա:



[2] Հ. Հո[illegible]յան ուսուցման հարցեր, Երևան 1979, էջ 71-

Իմաստի ընկալման փուլի նկարագրությունը

Այս փուլում հնչում է ուսուցչի կենդանի խոսքը: Համառոտ ներկայացնում է պատմվածքի արտահայտած գաղափարը:

Ապա լսում են առդիոնյութ, որը պատմում է Նար-Դոսի «Ես և նա» պատմվածքի «Ես» հատվածը:

Կշռադատման, գնահատման փուլի նկարագրությունը

Քառաբաժանի օգնությամբ գրառում են իրենց տպավորությունները:

Ի՞նչ էիք տեսնում տեքստը լսելիս:	**Ի՞նչ էիք զգում տեքստը լսելիս:**
Ի՞նչ լսեցիր հատվածը լսելիս:	**Դ՛իր նոր վերնագիր և ավարտ:**

Ամփոփում են և գնահատվում:

Տնային հանձնարարություն

Ներկայացնել հատվածի բովանդակությունը, կատարել գրառումներ գրականության տետրերում[3]:

[3] Ա. Դոլուխանյան., Հայ գրականության դասավանդման մեթոդիկա, Երևան 2006, էջ 62-64:

Եզրակացություն

Այսպիսով, Նար-Դոսի <<Ես և Նա>> պատմվածքը գեղեցիկ սիրո պատմություն էր: Բայց Ես-ը չդիմանալով կայքնի ուժգին հարվածին միանգամից խորտակվեց խափնված սիրուց: Նրա համար աղջկա մի նամակը, որում ասվում էր՝ «Գիտեմ, այս բանը շատ էլ հաճելի չպիտի լինի քեզ համար, բայց ի՞նչ արած, աշխարհիս մեջ ամեն բան պատահում է և ամեն բան կարող է պատահել», այնպիսի հոգեբանական ցավով էր ընկալում ԵՍ-ը: Նա երբեք չէր սպասի, որ օրերից մի օր նրան այդպիսի նամակ կգրեն:

Այս ամենին նա չէր կարողանում հավատալ մինչև չստացավ անսպասելի կերպով ստացած մի լակոնական հեռագիր - «Ամուսնացա»:

Եվ այս ամենից տանջված, նա թողնում է համալսարանը, իր դիսերտացիայիան և գնում է, որ հանդիպի արդեն իր համար նախկին դարձած սիրուն, բայց ապարդյուն:

Իմ կարծիքով այստեղ աղջիկը սխալ է վարվում Ես-ի հետ: Նա սկզբում խոստումներ է տալիս, հավատացնում է, որ մինչև կյանքի վերջ նրա հետ է լինելու և ահա մի օր նամակ է գրում, որ այլևս չի սիրում Ես-ին: Ինձ համար Ես-պատմվածքում հենց Ես-ը ճիշտ վարվեց, որ սխալը իր մեջ էր ուզում գտնել, որովհետև երբեք չէր կարող սխալ ման գալ աղջկա մեջ, երբ գիտեր, որ աղջիկը էլ չկա ու նրա հետ կապված ամեն ինչ կորած է:

<<Նա>>-ն էլի գեղեցիկ և էլի դավաճանված սեր: Սկզբում երկուսն էլ սիրում էին իրար, կապված էին մի ջութակի մեղմ ձայնից:

Այդ ջութակի հնչյունները Ջուլետիայի սրտից եկած ձայներ էին, գեղեցիկ, նուրբ, քնքուշ և միշտ լսելի: Ջութակի հնչյունները ամեն օր լսվում էին աղջկա պատուհանի տակ և աղջիկը պատուհանը բաց կլանված երաժշտության մեջ լսում էր:

Բայց մի չարաբաստիկ օր պատուհանը չի բացվում, Անտոնիոն ինչքան էլ ջանք էր գործադրում, որ ավելի հուզիչ նվագի, բայց միևնույն էր:

Եվ ահա պատուհանի մի փեղկը կիսաբաց եղավ, Ջուլետան առաջին հերթին մի կոպեկ նետեց, հետո մի թղթի կտոր, որում ասվում էր՝ «Հայրս ասաց, որ իմ և քո միջև անանց անդունդ կա: Մենք վերևն ենք, դու ներքևը, էլ մի՛ գա: Մոռացի՛ր ինձ»: Անտոնիոն հուսահատված այս ամենինց գնում է: Գնում է բայց ոչ անվերադարձ, նա գնում է մի օր բարձրունքի վրա կանգնած վերադառնալու նպատակով և այդպես էլ լինում է: Իսկ Ջուլետայի այս խոսքերին «Անտո՛նիո, ես քո Ջուլիետտան եմ, ես սիրում եմ քեզ…» Անտոնինոն պատասխանում է՝ «Բայց նորից սիրել նրան, ով խաղում է ուրիշի նվիրական զգացումների հետ, ով տարբերություն է դնում վերևի և ներքևի միջև, ավա՛ղ, սինյորա, ես չեմ կարող»:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ա. Դոլուխանյան., Հայ գրականության դասավանդման մեթոդիկա, Երևան 2006
2. Ես և նա (պատմվածքներ), Երևան 1973
3. Հ. Հովասափյան., Գրականության ուսուցման հարցեր, Երևան 1979